

8089

8090

8091

8092

8093

8094

8095

8096

8097

8098

8099

8100

891.99

9-70

98

Bound by
Standard Bookbinding Co.
34-36 Pleasant Street,
Boston, Mass.


Կ Ո Ձ

ՈՒՂՂԻԱԾ

ԵՒՐՕՊԵԱՆ ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԵՒ

ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻՆ



ԳԻՆՆ Է 25 ՍԱՆՏԻՄ



ՏՊԱՐԱՆ "ՀՆՁԱԿ"Ի

Պ Ա Ր Ի Ձ

1913

Handwritten text in Armenian script on the left side of the book cover, including the name "Գրքատեղի" (Library) and "Հայաստանի Հանրապետություն" (Republic of Armenia).

№ 22

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Ս.-Դ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

9(47 925)

4-72

Կ Ո Չ

ՈՒՂՂԻԱԾ

ԵՐՐՈՊԵԱԿԱՆ ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԵՒ

ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻՆ

ԳԻՆՆ Է 25 ՍԱՆՏԻՄ

ՏՊԱՐԱՆ "ՀՆՁԱԿ"Ի

Պ Ա Ր Ի Չ

1913

15769

Կ Ո Չ

ՈՒՂՂԻԱԾ

ԵՐՐՕՊԸԱԸՆ ՄԵԺ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

ԵՒ

ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻՆ

Ուղղելով ներկայ Կոչը եւրօպական մեծ պետութիւններին և ժողովրդներին, մենք կարծում ենք հայկական desiderata-ների հաւատարիմ թարգման լինել, իբրև հայ քաղաքական կուսակցութիւն, որ գոյութիւն ունի քսան և հինգ տարիներից ի վեր, որ խոր արմատներ է ձգած հայ ժողովրդի մասսայի մէջ և որի անունն ու գործը բազմիցս միախառնուած են եղել Հայաստանի յեղափոխական շարժումների հետ:

Մենք սարսափելի ենք գտնում ամեն պատերազմ, որ նկատում ենք իբրև ոճրագործութիւն՝ քաղաքակիրթ մարդկութեան համար անօթալի: Մենք կրում ենք մեր սրտում անհաշտ և անսահման ատելութիւն դէպի այն պատերազմները, որոնց նպատակն է յափշտակութիւն, նւաճումն և մի ժողովրդի տիրապետութիւնը միւսի վրայ: Մենք բուռն սաստկութեամբ դատապարտում ենք ամեն միտք սպանիչ ընդհարման եւրօպական ազգերի միջև: Բայց հէնց այդ պատճառով մեզ հարկադրուած ենք տեսնում հարցնել, թէ Թիւրքիայի ներքին վիճակը իրապէս խաղաղութեան վիճակ է արդեօք: Կարո՞ղ ենք արդեօք ասել, որ ամբողջ դարերի, և մանաւանդ վերջին դարու ընթացքում, Թիւրքիայի, այսպէս

78127-Վ.Յ.



859-87

91

կոչւած, ներքին խաղաղութիւնն արդարև խաղաղութիւն է ճանաւորապէս հայ ժողովրդի վերաբերութեամբ: Չէ՞ կրում արդեօք նա, այդ ժողովուրդը, ճիշտ և անդադար, սարսափելի հալածանքներ, որպիսին կարելի է գործադրել ճիայն զէնքի ուժով նաւաւած ճի ժողովրդի վրայ: Ինչո՞վ է նրա ներկայ, և ամեն ժամանակեայ, վիճակը տարբերուած այն վիճակից, որ ստեղծուած է պատերազմից յետոյ: Յարատև պատերազմ չէ՞ արդեօք, իր աւերներով ու կոտորածներով, որ հրահանգել ու կատարել են, դարերի ընթացքում, թիւրք կառավարութիւններն ընդդէմ անպաշտպան հայ ժողովրդի: Եւ, հետևաբար, բնական չէ՞ արդեօք, որ, յանուն ճարդկութեան և յանուն ժողովրդների ազատագրութեան, նոյն իսկ նրա՛նք, որոնք առաւելապէս ատելութիւն ունեն զէպի պատերազմները և ցանկանում են խաղաղութիւն, կոչւած լինեն բարձրացնելու իրանց ձայնն իրերի այգորինակ դրութեան դէմ: Արդարացի չէ՞ արդեօք, որ նրանք բողոքեն ընդդէմ այդ յարատև պատերազմի հայատանում, պատերա՛զմ, որի նըպատակն է բնաջինջ անել ճէկ աշխատասէր, կուլտուրական ու կորովի ազգ, և այգպիտով ջանք անեն առաջն առնել այն բարդ կիճուտութիւնների, որ ամեն բօպէ կարող են երևան գալ Արևելքում: Որովհետև ճինչև որ դարճանը չէ տրւած հիւանդութեան, սրա տագնապը երկիւղալի է:

Մեր սկզբունքներով ճենք դաւանող ենք ժողովրդների եղբայրութեան, նրանց ազատ դարգացճան խաղաղութեան ճէջ, որ անհրաճեշտ պայճանն է նրանց առաջխաղացութեան զէպի ճարդկութեան ամբողջական էճանսիպացիա, զէպի իրագորճումն արդարութեան ու հաւատարութեան իղէպի, զէպի որը ճգտում են աշխատանքի ու ճտքի բոլոր կենդանի ոյճերը քողաքակիրթ աշխարհում: Եւ հէնց այգ սկզբունքներէ տրամաբանութեամբ է, որ հայ ժողովրդի ազատագրութիւնը

ներկայանում է իբրև ճի հիմնական անհրաճեշտութիւն, ազատագրութիւն՝ քիւրդական վայրենի ցեղերի լճից, ճի կորճանող թիւրքիայի բունապետական ու տճարդի լճից: Մենք ո՛չ ճի թշնամութիւն չունենք թիւրք ժողովրդի դէմ, որն ինքն իսկ օսճանեան կառավարութիւնների ճի գոհն է: Բայց անգիտակ իր վիճակի՝ թիւրք ժողովուրդը հնազանդութեամբ ենթարկուած է իր տխուր բախտին և նոյն իսկ դաւնում է կառավարիչների ճեռքին Փանատիկոսութեան ճի զէնք՝ ուղղւած գեաճուրն երի դէմ: Այսպէս, թիւրք ժողովուրդը ո՛չ ճիայն երբէք չէ երկրորդել հայ ժողովրդի ջանքերը երկրի ընդհանուր դրութեան բարելաճան ճէջ, այլ և ինքը երևան է եկել իբրև դրա կատաղի ու ահաւոր թըշնամի: Եւ հայ ժողովուրդը, իբրև ճնշւած ժողովուրդ, կարողացաւ հասկանալ իր սուրբ իրաւունքը, իրաւունք յեղափոխութեան՝ իր սեփական ազատագրութեան նպատակով: Ահա այգպէս է, որ հայկական ինդրի անճիջական լուճումը դարճել է ճի ստիպողական անհրաճեշտութիւն: Եւ այգ լուճումը պէտք է լինի ընդարճակ ռամկավարական ոգով, բնական ու պատճական պայճանների հաճաճայն և ամփոփւած այնպիսի ճեւերում, որ յայտնեն ազատ ասպարէգ բոլոր քաղաքական, սօցիալական ու տնտեսական տէնդէնցիաների հետևողական դարգացճան՝ զէպի առաջադիմութիւն, զէպի իղէալ:

Հայկական ինդրը մնում է տակաւին և ճիշտ հրատապ՝ իր պատճառներով և իր հետևանքներով: Չը՛ նայաճ բոլոր աղէաներին, որ կրել է հայ ժողովուրդը, նա չէ կորցրել իր կենսունակութիւնը: Նա կապւած է հայկական հողին և ճգտում է, աւելի քան երբ և է, զէպի ազատագր-

ըրութիւն, դէպի նոր կեանք, որը նրա ընդունակութիւնների ու պահանջների համար կը բանայ զարգացման ազատ ասպարէզ:

Հայկական խնդիրը դեռ մնացել է անլուծ: Անհանգըստութիւնը, որ պատճառու է նա, դեռ ևս չէ պակասած: Պատճական և անլուր “սարսափներից” յետոյ քաղաքակիրթ աշխարհի շուրջը դարձել են մի շարք դէպքեր, խիստ լուրջ, մինչև իսկ եղբրական, և թէև շատ տարիներ եկել անցել են, Հայաստանի արիւնլւայ ուրւականը, սակայն, դեռ հալածու է Եւրօպայի վրդով խղճմտանքը: Հայաստանի անցեալը դեռ ամենքի աչքի առաջ է, և նրա պատմութեան էջը դեռ չի փակւիլ, մինչև որ ապագան չը հատուցանէ արդար բաւարարութիւն բազմաչարչար ազգին:

Եւրօպայի պարտքն է տալ այդ բաւարարութիւնը Հայաստանին: Եւրօպան ստանձնել է իր վրայ պարտականութիւններ դէպի նա, Բերլինի Կօնգրէսից ի վեր, և դրանք աւելի ևս աճել են վերջին քսան տարւայ մէջ:

Անցեալ դարու երկրորդ կէսի ընթացքում մեծ ջանքեր թափւեցան անխախտ դարձնելու Թիւրքիայի ամբողջութիւնը, որպէս և պահպանելու նրան մեծ պետութիւնների շարքում: Այսօր ամեն ոք գիտէ այդ քաղաքականութեան հետևանքը: Թիւրքիան իրան ցոյց տւեց անընդունակ օգտւելու այդ ջանքերից: Բարենորոգումների ամեն ծրագիր ջուրն ընկաւ, և թիւրքական, այսպէս կոչւած, “սահմանադրութիւնը”, ղլնւորական ըմբոստութեան այդ պտուղը, եղաւ մի վիժւածք: Որս’նք են դրա պատճառները: “Սահմանադրական” և կամ այլ կառավարութեան չար կածքը և ինտրիզները չեն միայն: Այն անշարժութիւնը և անտարբերութիւնն է նաև, որ տիրում է թիւրք ժողովրդին՝ քաղաքական ու տնտեսական ամեն առաջադիմութեան նկատմամբ:

Այդ ապատիւն, այդ քնատութիւնն իրանց արձանները խրած ու ձգած են այն թունաւոր պայմաններում, ուր խաբխափում է “թիւրքական կեանքը”, որ իրապէս կ ե ա ն ք ի կերպ անգամ չունի, որովհետև կուլտուրապէս գտնուում է ստոր աստիճանի վրայ: Մահճեղականը փոփոխման ո՛չ մի կարիք չէ զգում: “Բարենորոգում” խօսքը նրա համար չունի ո՛չ մի հրապոյր: Հէնց այդպէս է, որ յուր վարչութիւնը, որի զոհն է նաև նոյն ինքը, դարձել է մի նորմալ զրութիւն, որը նա համարում է օրինական և օրհասականապէս անհրաժեշտ: Հանրայայտ փաստ է, որ ամեն անգամ, երբ ըէֆօրմի փորձ է եղել, ինքը, միւսիւլմանը միակ Հանդիսացել է նրա իսկական թշնամին: Նա երկիւղ է կրում ամեն մի նորամուծութիւնից՝ քրիստոնեայ ազգերի կողմից եկած: Դրանուամ է նրա ներքին ճշտագոյ սկզբունքը, մի սկզբունք, որ թիւրք կառավարիչները կարողացել են միշտ ծառայեցնել իրանց կածքին: Միւս կողմից, մահճեղականը դիւրութեամբ զիջանում է ամեն բռնութեան, երբ խնդիրը չէ վերաբերում իր ֆանատիկոսութեան: Այդպէս՝ երբէք ոչինչ նոր բան նրա ներքին զրութեան մէջ: Ամեն մի թիւրք կառավարութիւն խաղացել է այդ Հին լարերի վրայ, և մի կայսրութիւն, որ այդպիսի ողորմելի հիմունքների վրայ է հաստատուած, բռնապետական ու փճացած, բարբարոսական ու անկարգ մի կայսրութիւն, նախապէս դատապարտուած է կորստեան:

Երևակայենք Հիմա ամբողջ ժողովրդներ, ինչպէս յոյներ, մակեդոնացիներ, հայեր և այլն, ցանկացող քաղաքական, տնտեսական ու սօցիալական առաջադիմութեան, ընդունակ մտաւոր ու բարոյական զարգացման և թիւրքերից շատ աւելի բարձր կուլտուրայի տէր, երևակայե՛նք դրանց թիւրք կառավարութեան լծի տակ, ճնշւած, անարգւած, թալանւած, ջարդրւած, կոտորւած իրանց նւաճողների վայրագութեամբ: Այդ

ժողովրդները կարիք ունեն իրանց կեանքի և իրանց պատւի պաշտպանութեան. նրանք պահանջ ունեն իրանց հասարակական կեանքի բոլոր պայճանների և բոլոր ձևերի յեղաշրջման ու կերպարանափոխութեան — և նրանք ձգտում են դէպի այդ յեղաշրջումը:

Օսմանեան կառավարութիւններն ամեն ժամանակ բաւական պարզօրէն հասկացել են՝ պատմականապէս հիմնւած և ճիճեանց արձատական կերպով հակադիր տէնդէնցիաները, որ Թիւրքիայում գատում են միւսիւլման ու քրիստոնեայ տարրերին: Նրանք զգացել են, որ իրանց լծի տակ գտնւած քրիստոնեայ ժողովրդների առևտրական, ինդուստրիական ու հողագործական ճարտարութիւնը, որպէս ճտաւոր ու բարոյական զօրութիւնը, և այլ ընդունակութիւնները՝ ծի վիհ են փորել քրիստոնեաների ու թիւրքերի միջև, ըստ որում վերջիններս, չունենալով այդ ընդունակութիւնները, չեն ներկայանում իբրև արտադրողներ: Գոյութիւն ունեցող պայճանների շնորհով թիւրք կառավարիչները շարունակ վարել են պարագլխային կեանք, իբրև քրիստոնեաների արտադրութեան սպառողներ միայն, և, քաղաքականապէս ու սօցիալապէս, օգտւել են իրանց առանձնաշնորհ դիրքից՝ իբրև նւաճողներ և իշխողներ: Այնքան ժամանակ, որքան քրիստոնեայ ժողովրդները համակերպւել են այդպիսի գոյութեան, այնքան ժամանակ, որքան նրանք չեն ցոյց տւել պարզ դիտակցութիւն իրանց վիճակի, այնքան ժամանակ, որքան նրանք հնազանդ կրել են բռնութեան լուծը և ենթարկւել թիւրքերի գործած աւերի ու հարստահարութեան, — պարագլխային կեանքի վայելումը եղել է դիւրին ու հաճելի որպէս թիւրք կառավարութիւններին, նոյնպէս թիւրք պաշտօնեաներին ու ժողովրդին: Այս վերջինը, աղքատ և անընդունակ արտադրող լինելու, ի վերջոյ պարագլխային կեանքը նկատել

է իբրև իր գոյութեան հիմնական պայճան: Աւելի ևս. պարագլխային այդ դրութիւնը դարձել է մի հզօր քաղաքական տարր ու ֆակտօր՝ իբրև արգելք հպատակ քրիստոնեայ ժողովրդների նիւթական զարգացման: Այդ նպատակների համար՝ իրար յաշորդող օսմանեան կառավարութիւնների ձեռքին զէնքի դեր են խաղացել պետութեան մէջ բնակող նաև քիւրդ և այլ բարբարոս ցեղերը: Թիւրք կառավարութիւններն իրանց սովորութիւնն են արել՝ թոյլ տալ այդ ցեղերին շարունակական յարձակումներ գործել քրիստոնեայ դրացիների վրայ. և դա՝ ո՛չ միայն նրանց վայրենի բարբրին յագուրդ տալու նպատակով և ո՛չ էլ միայն արգելք լինելու, որ նրանք չը դառնան խռովութիւնների աղբիւր պետութեան մէջ: Օսմանեան կառավարութիւններն աւելի ևս հեռու են գնացել. — նրանք խրախուսել են այդ ցեղերին՝ քրիստոնեաների սեփականութեան և ինչքի աւերման գործում, իրա՛նք խիստ աւել են նրանց կարգադրութիւններ որոշ աւազակային գործողութիւնների համար, և իրա՛նք խիստ պատրաստ են եղել՝ իրանց օգնութեամբ ու հովանաւորութեամբ՝ միշտ նրանց նեցուկ լինել ամեն հակառակ միջամտութեան դէմ, ո՛ր կողմից էլ որ առաջ գար այդ միջամտութիւնը . . . Բայց հէնց որ քրիստոնեայ ժողովրդների մէջ սկսաւ զարթնել դիտակցութիւն իրանց ողորմելի դրութեան մասին, բողոքները թափւեցան օսմանեան կառավարութիւնների գլխին: Սրանք, փոխարէն ցաւը բուժելու, նախաձեռնեցին, միանգամից ընդ միշտ, խիստ ճնշումների էրան, որի զագաթնակէտն է եղել ամեն ժամանակ ջարդ ու կոտորած: Եթէ բաւարարութիւն տրւէր քրիստոնեաների արդար և իրաւացի պահանջներին, այն ժամանակ դրանք կարող էին յայտնւել ճշտական վտանգ. ուստի և թիւրք կառավարութիւններն իրանց քաղաքական յարատև սկզբունքն էին դարձրել՝ բնաջինջ անել քրիստոնեայ ժողո-

վըրդներից ա՛յն մէկին, որ աւելի մեծ ինքնաճանաչութիւն էր ցոյց տալիս: Ահա այդպէ՛ս է, որ ահաւոր ճնշումներն ու կոտորածները դարձել են մի գծազրւած աւանդական քաղաքականութիւն, որին դիմել են սուլթաններն ամեն անգամ, երբ ուզեցել են ոչնչացնել իրանց ըէփմի տակ հեծող այս կամ այն քրիստոնեայ ժողովրդին:

Դա՛ է հայերի քաղաքական դրութիւնը թիւրքիայում: Եւ սակայն այդ հինաւուրց ազգը, շրջապատւած վայրենի ցեղերով և Փոքր Ասիայի բարբարոս միւսիւլմաններով, մի կուլտուրական ու առաջադէ՛մ ազգ է: Եւ բնական չէ՞ արդեօք, որ նրա էական հոգան ու նպատակը լինի իր ապագան՝ իրբև ազգ:

Բերլինի Դաշնագիրը գծազրուծ է Հայաստանի պահանջները: ՅԱ-րդ յօդւածը կազմւած է այսպէս. —

Բ. Դուռը կը պարտաւորուի գործադրել առանց յետաձգման հայրենակ գաւառներու տեղական պէտքերու պահանջած բարեօրոճման եւ բարեմտօրոճման, եւ երաշխաւորել հայերու ապահովութիւնը Ձերեզգներու եւ Բիւրսերու դէմ: Բ. Դուռն այդ նպատակով իւր ձեռք առած միջոցներու մասին պիտի պարբերաբար հաղորդէ Պետութիւններուն որ վերահսկող են անոնց գործադրութեան:

Այդ յօդւածը շատ անորոշ է: Պահանջւած ըէփօրմաների էութիւնը բոլորովին չէ՛ մատնացուցւած, և այդ հանգամանքը թոյլ է տւել թիւրք կառավարութեան զանց անել իր պարտաւորեցուցիչ խոստումները: Ժամանակ առ ժամանակ, պատասխանելով մեծ պետութիւններից մէկի կամ միւսի հարցապնդման, Բ. Դուռն անփոփոխ կերպով յայտնել է, որ տեղական պայմանների պահանջած ըէփօրման արդէն գործադրւած են, ա՛յն վերապահութեամբ, սակայն, իր մտքում, որ տեղական պայմանները բնաւ պէտք չունեն ո՛չ մի բարենորոգման: Երեսուն և չորս տարի շարունակ՝ նշանաւոր

յօդւածի այդ ֆանտաստիկական մեկնութիւնը լուեխայն ընդունել է եւրօպական տէրութիւնների ու հասարակութեան կողմից: Բայց հասկանալի է ամենքին, որ օսմանեան կառավարութիւնից պահանջել բարենորոգումների նոր խոստումներ, մինչև իսկ ինամքով ու ճանրամասն նախագծւած բարենորոգումների, վիրաւորանք կը լինէր ընդդէմ sens commun-ի և ծաղրանք հայերի տանջանքների դէմ: Միջազգային Յանձնախումբը կազմելու նպատակով էական միտքը հէնց նրանում է, թէ՛ նոյն իրան՝ եւրօպային է պատկանում ըէփօրմաների գործադրութիւնը, թէ՛ նրա պարտականութիւնն է ստիպել սուլթանին ընդունել նրանց: — Ի՞նչ պիտի լինէին այդ բարենորոգումները: Բերլինի Դաշնագրի միջոցին ներկայացուցեցաւ երկու նախագծեր, երկու Հայերի կողմից, եւրօպական մեծ պետութիւններին՝ ՅԱ-րդ յօդւածի գործադրութեան համար: Մէկը՝ Կ. Պօլսի ներսէս Պատրիարքի կողմից Բերլինի Կօնգրէսին՝ յատուկ հայ պատգամաւորութեան ձեռքով: Այդ պատգամաւորութիւնը բաղկացած էր երկու հոգիից — Ս. Խըրիմեան, աւելի ուշ՝ Կաթողիկոս ամենայն հայոց, և արքեպիսկոպոս Խորէն նարբէյ: Երկրորդ նախագիծն էր Նուբար փաշայի կողմից, Եգիպտոսից, ճննդեամբ հայ:

Հայկական խնդրի լուծման համար առաջադրւած գլխաւոր դժարութիւնը, մի դժարութիւն, որ թիւրքասէրները փորձեցին ներկայացնել իբրև անյաղթելի և որ հասարակութիւնն առհասարակ չափազանցուծ է, դա այն է՝ թէ հայ ազգաբնակչութիւնը խառն ազգաբնակչութիւն է: Անցեալ ժամանակները Մեծ ու Փոքր Հայքի, որպէս և Կիլիկեան հողերը պատկանում էին հայերին. բայց դարերի ընթացքում, և ճանաւանդ վերջին եօթմասնատն տարւայ միջոցին, հողերի ընդարձակ տարածութիւններ լլւեցան նրանցից և տրւեցան այլ և այլ մահճեղական ցեղերի: Այսօր Փոքր Հայքում բնակիչների մեծ

Թիւր ճիւղակւման է: Մեծ Հայքում, որ Բերլինի Դաշնագրի Հայաստանն է, բնակիչների երկու երրորդ մասը կազմում են Հայերը, մնացածը, ձօնաւորապէս 800,000 հոգի, ճահճեղականներ, մեծ մասամբ եկւորներ են դրսերից, որոնց թիւրք կառավարութիւնը Հաստատել է այնտեղ ուժով:

Բայց մենք պէտք չունենք վէճի նիւթ դարձնելու պատմական իրաւունքները. ճիւղակւմաններն այնտեղ են և պէտք է նրանց առնել ուշադրութեան տակ: Պէտք չէ՛ որ Հայաստանում մտցելիք բէֆօրմները յայտնեն այնպիսի մի յեղաշրջում, որն այսօրայ ճնշողներին դարձնէ վաղան ճնշւածներ:

Որպէս ներսէս պատրիարքի, նոյնպէս նուբար փաշայի առաջին հոգան է եղել պահպանել հաւասարակշռութիւնն Հայաստանի քրիստոնեաների ու ճահճեղականների միջև: Նրանց երկու նախագծերն էլ ունեն ընդհանուր շատ կէտեր, ուստի բաւական կլինի, մեր մտքի բացատրութեան համար, այստեղ նրանցից ներկայացնել մէկը միայն, այն է՝ Պատրիարք ներսէսի նախագիծը, իբրև աւելի հեղինակաւոր և աւելի խորիմաստ: Նրա գլխաւոր կէտերն են հետևեալները. —

I Հայասանը կը պարունակէ Էրզրումի եւ Վանայ գաւառները, Տիգրանակերտի գաւառի մէկ մասը մինչև Եփրատ, Արդնի եւ Սղերդ սանճակները, նաև Փօղո-Ռիզա.

II Հայասանը պիտի կառավարէ Բիւսոնեայ կառավարչապետ մը, նախընտրելի է՝ հայազգի, նշանակուած հինգ տարի ժամանակով՝ ստորագրող Պետութեանց հաւանութեամբ, եւ ունենալով իրեն իբրև օժանդակ մարմին Վարչական Խորհուրդ մը: Գաւառներու հասոյթին 100իմ 20ը պիտի հասուցուի Օսմանեան Պետութեան դրամարկիին, իսկ 100իմ 80ը պիտի յասկացուի նախապահներու շինութեան եւ դպրոցներու ծախսերուն:

III Պիտի նշանակուի մահմետական ասեմակալութեան գլխաւորներէն մին իբրև լննիչ Շէրիաթի ասեանի, որ դասաւոր է մահմետա

կաններու մէջ եղած վեճերու: Ամեն քաղաքային, առեւտրական եւ քրեական դատերը Բիւսոնեաներու մէջ, կամ մահմետականներու եւ քրիստոնեաներու մէջ, պիտի լննուին ու վննուին կառավարչապետէն նշանակուած երեք դասաւորներու ասեանի կողմէն:

IV Կրօնի կասարեալ ազատութիւն, եւ ամեն կղեր կը վնարուի իր հասարակութեան կողմէն:

V Երկրի հասարակաց զօրք կը կազմեն ոստիկանութիւնը եւ միլիտը: Միլիտ զօրք պիտի բաղկանայ — իբաց առեալ քիւրտեր եւ այլ քափառիկ ցեղերը, — հայերէն եւ այլ բնակիչ ոչ-հայերէն, որոնք հինգ տարիէն աւելի ապրած են երկրին մէջ: Միլիտ զօրք պիտի գրանուի գլխաւոր հրամանատարի մը հրամանի ներքոյ եւ պիտի բաղկանայ 4,000 հոգիէ:

VI Հանրային Խորհուրդը պիտի կազմուի հետեւեալ եղանակով, ամեն գաւառակ կը դրկէ երկու պատգամաւոր — մէկ հայ բնորոտ հայերու կողմէն եւ մէկ մահմետական բնորոտ մահմետականներու կողմէն: Այդ պատգամաւորները գումարուելով սանճափի գլխաւոր քաղաք, իւրաքանչիւր ցեղի կողմէ կ'ընտրուին երկու խորհրդականներ:

VII Միջազգային Յանձնախումբ մը մէկ տարւան ժամանակամիջոցով պիտի նշանակուի ստորագրող Պետութեանց կողմէն՝ նկատելու համար ներկայ կանոններու գործադրութեան, որը զօրութեան մէջ կը մտնէ ասեմագրութեան ստորագրութեան օրէն սկսեալ երեք ամսուայ միջոցին:

Տասանորդական հարկը պիտի վերացուի եւ հաստատուի հողային հարկ. պիտի հրատարակուի նորագոյն օրէնսդրութեան հիմունքներու վրայ կազմուած քաղաքային եւ քրեական օրէնագրեր: Մահմետականները զինաքափ պիտի ըլլան, ինչպէս որ են արդէն, Բիւսոնեաները: Ամեն խնդրագիր ուղղեալ վարչական եւ շրջական իշխանութեանց, ինչպէս եւ ասեմաներու ամեն նախնական լննութիւնները պիտի կասարուին ազգային լեզուով: Կառավարութեան հրովարակները եւ այլ գործաւորութիւնները պիտի հրատարակուին միաժամանակ հայերէն եւ քիւրտերէն:

Սոյն նախագիծը կրում է հայկական ինքնավարութեան (autonomie) գաղափարը, այնքան՝ որքան այդ ինքնավարութիւնը կարող է պատշաճ լինել թիւրք կառավարութեան դիւրագգաճութեան: Նա ընդունում է, թէև սահմանափակ չափով, Հայաստանի թէ՛ քրիստոնեայ և թէ՛ ճահճեղական բնակիչների իրաւունքը՝ ձայն ունենալ երկրի գործերի կառավարման մէջ՝ Վարչական Խորհրդի պատգամաւորների ընտրութեամբ: Բացի այդ՝ նախագիծը շատ հետաքրքրական է նրանով ևս, որ նա ցոյց է տալիս ամեն ճիշտան նկրտման բացակայութիւն Հայերի կողմից: Միւս կողմից, սակայն, մեզ թւում է, որ նա չունի գործնական մեծ արժանիք: Յանկաւ նախով հեռացնել կասկածի նշոյլ անգամ որ և է անարդար վերաբերութեան դէպի ճահճեղականները, մի կողմ են ձգել ամեն բան, ամեն նախագծի գործարականութեան մինչև իսկ կարելիութիւնը: Դիւրին է նկատել, որ ճահճեղականների ու քրիստոնեանների փոխադարձ բարի զգացումներով հանդերձ և նրանց ամենահաշտ դիտումներով հանդերձ՝ այդ նախագծի դ ու ա լ ի զ մ ը (երկուութիւնը) կարող է առաջացնել շատ դժարութիւններ, հէնց թէկուզ լեզւի նկատմամբ:

Այդ դուալիզմը զգացւում է ամեն տեղ, որպէս վարչական, նոյնպէս Հանրական Խորհրդներում, որպէս դատավարութեան, նոյնպէս վարչութեան (administration) մէջ: Ամեն գործառնութիւն պէտք է տեղի ունենայ երկու լեզուով: Երևակայեցէք դրա պատճառած յապարդումները, թարգմանների մէկ ամբողջ ընդարձակ մարմինը, որ պիտի ունենալ ամեն գաւառի թէ՛ վարչութեան մէջ և թէ՛ դատարանում, որպէս և երկու Խորհրդներում, որոնք կոչւած են քննելու զանազան առաջարկներ: Այդ անյարմարութիւնները կը ստեղծեն կատարեալ խուլ, անանցելի առանցք ամեն անգամ, երբ պատահելու լինի զգացումների որ և է հակառակութիւն Հայերի ու

ճահճեղականների միջև, այնպէս, ինչպէս դա գոյութիւն ունի այսօր, և որը չէ կարող յանկարծից վերանալ: Հայաստանի բնակիչների երկու մասն էլ դրւած կը լինեն իրարու դէմ առ դէմ, իբրև բնականօրէն իրարու հակառակ բանակներ, եթէ չստենք աւելի, քանի որ ո՛չ մի միջոց ձեռք չէ առնւած նրանց ձուլելու միմեանց հետ և կազմելու քաղաքացիների մէկ և ընդհանուր մարմին: Այսպէս, ճահճեղականներն ու քրիստոնեանները հարկադրւած լինելով ընտրել պատգամաւորներ միայն իրանց տարբեր հաւատակիցներից, այդպիսով նախագիծը պահպանւած է լինում և յարատև դարձնում ներքին կռիւներ միւսիւրմանների ու Հայերի մէջ, և ամեն անգամ, երբ առաջ գայ անհամաձայնութիւն, մէկ արգելափայտ դրւած կը լինի վարչութեան անխի արանքը: Այդ կերպով՝ միայն Կառավարչապետի հեղինակութիւնն է հանդիսանալու միակ ընդունակ վէճին լուծում տալու, անցնելով վիճողների մէկի կամ միւսի կողմը: Բաց այդպէս լինելով աւելի պարզ չէ՞ բնաւ չը ծանրաբեռնւել կրկնակի վարչութեան խանգարիչ մեքենայով, Կառավարչապետին տալով մէկ անպայման իշխանութեան իրաւունքներ, մի բան, սակայն, որ չէ կարող բնաւ երաշխաւորութիւն լինել հայ ժողովրդի խաղաղ, կանոնաւոր ու ազատ զարգացման համար Այդ արդէն բերում հասցնում է Պատրիարք Ներսէսի նախագիծը մինչև, ինչպէս ասում են, reductio ad absurdum. Իբրև երկու՝ իրար դէմ հաւատարապէս հզօր՝ կողմերի ազատ դատաւոր, Կառավարչապետը բնական կերպով կը դառնայ երկրի իրական գորութիւնը:

Նուբար փաշայի նախագիծը գալիս է աւելի ամրապնդելու մեր եզրակացութիւնների այդ արամբանութիւնը: Նա գտնում է անհրաժեշտ կառավարութեանը տալ աւելի ընդարձակ իշխանութիւն, պահանջելով հանդերձ, իբրև նրա

օժանդակ, Վարչական Խորհրդի դուալիզմը, որ ունի ներսէս պատրիարքի նախագիծը, որպէս և պահանջելով վերջինիս գլխաւոր դրութիւնները: Այն կէտում, որտեղ նա տարբերուում է ներսէս Պատրիարքի նախագծից, նուբար փաշայի ծրագիրն աւելի դիւրութեամբ կը գործադրուէ գուտ ինքնատիրական, ավտօկրատ սկզբունքների համաձայն: Միւս կէտերում նա նոյն անշարժ անիւն է, ինչ որ և նախորդը:

* * *

Բէֆօրմների ծրագիրը, որ 1895 թ. ներկայացեցաւ Սուլթանին, երեք ճիւղերով նիւթով, Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանների կողմից, մինչ այդ եղած ամենակարևոր և շատ առաւել հեղինակաւոր փորձն է՝ գործնական լուծում տալու հայկական դժուարութիւններին: Նրանց մի քանի առաջադրութիւններն ըստ ինքեան արժանաւոր են: Հարկահանութեան գործադրութիւնը համայնքի կողմից ընտրուած գիւղապետների և ո՛չ թէ թիւրք պաշտօնեաների ու զինւորների միջոցով, հովանաւորութիւն անհատների ապօրինի ձերբակալութիւնների ու բանտարկութիւնների դէմ, տանջանքի (torture) վերացումն, ապահովութիւն կրօնական հալածանքի դէմ, — այդ բոլորը կարևոր դրութիւններ են, եթէ միայն կատարելապէս գործադրուեն հայ ազգաբնակչութեան նկատմամբ: Բայց որքան էլ դրանք լաւ լինեն ըստ ինքեան, կայ մէկ աննպաստ պայճան. կատարեալ բացակայութիւն որ և է երաշխաւորութեան, որ նրանք յիրաւի կը գործադրուեն: Ենթադրենք, որ թիւրք կառավարութիւնն ընդունեց բոլորն ու իւրաքանչիւրն այդ դրութիւններից, առանց սակարկութեան մէջ մտնելու հայ արեան ամեն-մի կաթիլի համար: Ենթադրենք, որ մէկ ամուսայ ընթացքում ի նպաստ հայերի յայտարարեցան օրէնք-

ներ, որոնք ամփոփում են Յանձնախմբի բոլոր առաջարկները: Ո՛ւր են երաշխաւորութիւնները, որ նրանք չեն մնալ մեռած տառ:

Ծրագիրը յիշատակում է, իբրև երաշխաւորութիւններից մէկը, քրիստոնեայ կառավարիչների նշանակումն այն գաւառներում, ուր քրիստոնեաներ են մեծամասնութիւնը, և vice versa — այնտեղ, ուր քրիստոնեաները փոքրաթիւ են: Դա ուրիշ բան չէ, եթէ ոչ պատրիարք ներսէսի դուալիզմը, թէև ընդունակ կերպով փոփոխուած ձևի տակ, բայց և այնպէս գուրկ ամեն նշանակութիւնից: Ժողովրդին ո՛չ մէկ իրաւունք չէ տրուում ճանակցութիւն ունենալու իր գործերի կառավարման մէջ, որպէս և վերահսկելու պաշտօնեաներին: Ո՛չ մի երաշխաւորութիւն չը կայ խօսքի ու ճամուլի ազատութեան, որպէս և ժողովրդի ընտրական իրաւունքի: Կառավարիչներ ու փոխ կառավարիչներ նշանակուած են ս ու լ թ ա ն ի կողմից, որով ոչնչացուած է կրօնական ազատութեան վերաբերեալ պայճանը: Թիւրքիայի պաշտօնեաների մէջ վատերի թուում եղել են քրիստոնեաներ, որոնք իրանց շահի տեսակէտից ուրացել են իրանց կրօնը: Նրանք ճաղաչափ անգամ պակաս վատ չէին լինիլ, եթէ մնային քրիստոնեայ: Իսկապէս նրանցից ոմանք մնացել են քրիստոնեայ մինչև օրս: Հաւաքական ն օ տ ա յ ի հեղինակները բաւականաչափ ծանօթ են թիւրքական բիւրօկրատական սխտէմին, որպէսզի պայճան դնէին, որ սուլթանի կողմից նշանակուած պաշտօնեաները հաստատուեն մեծ պետութիւնների հաւանութեամբ: Դա ունի կարեւորութիւն, թէև խիստ փոքր, այնքան, որքան ժամանակ Յանձնախմբը գտնուում է իր տեղը և կարող է որոշ հսկողութիւն ունենալ թիւրքական պաշտօնեաների ընթացքի վրայ: Բայց հէնց որ նա մեկնեց և հասարակաց հետաքրքրութիւնը պակասեց հայկական խնդրի նկատմամբ (մի բան, որ ժամա-

895-96



նակի ընթացքում կամայականայ կը լինի), երօպական այդ հաւանութիւնը սուլթանի կողմից նշանակած պաշտօնեաների ծասին կը յայտնէ ծի պարզ ձեւականութիւն: Հայերն, այդ պիտով, կը մնան նոյնպէս, ինչպէս այսօր, պաշտօնեաների քմահաճոյքի գոհ: Այսպէս, եզրակացնում ենք, այդ “սահմանադրութիւնը”, որ կը տրէ Հայ երկրին, կունենայ հազիւ ծի քանի ամսւայ գոյութիւն: Դա, ի հարկէ, ծի շատ տխուր հետեւանք է, և, անտարակոյս, պետութիւնների ցանկացածն այդ չէր:

Պետութիւնների հաւաքական նօտայի կարևորութիւնը կայանում է նրանում, որ նա սառոյցը կոտրեց — որ նա առաջին անգամ, ճանաչեց գ ո Ր ծ ն ա կ ա ն ծիջամտութեան անհրաժեշտութիւնն ի նպաստ հայերի, որպէս և նրանում, որ պաշտօնապէս ճանաչեցաւ վերջինների իրաւունքն ի Ր ա ն ց երկիր անանել հայաբնակ ամբողջ վայրերը: Այդ հաւաքական նօտայում կայ ծի կէտ, որ թերևս վրիպէ ուշադրութիւնից, բայց որ ունի ահագին նշանակութիւն — ո՛չ ծեկ ուշադրութիւն չէ արւած այն արևատական բաժանմունքների վրայ, որ Բերլինի Դաշնագրով ստեղծել էին Մեծ ու Փոքր Հայքի ծեջ: Բերլինի Դաշնագիրը, որ ճանաչում է ծիայն առաջինն իբրև Հ ա յ ա ս տ ա ն, թողւած է առկախ և հողի այն ամբողջ տարածութիւնը, որ կազմում են թէ՛ Մեծ և թէ՛ Փոքր Հայքը ծիասին, ն ե Ր ծ ո լ ծ Լ ա ծ էայն վիլայէթների թւում, որոնց համար պահանջում են ըէֆօրմներ: Զարմանալի է, սակայն, Կլիկիայի մեկուսացումը, որը նոյնպէս, ինչպէս Մեծ ու Փոքր Հայքը, հայկական գաւառ է, ծիւնոյն պահանջներով և ծիւնոյն վիճակով: Զը ծոռանք դեռ երէկւայ կոտորածները, որոնց գոհ գնացին հազարաւոր հայեր Արմնայում:

Կայ ծեկ իրողութիւն, որ մեծապէս հարթում է ուղին հայկական ինդրի գործնական լուծման առաջ: Խնդիրը նրանումն է, որ հայ ազգաբնակիւթիւնը, թէև խառն միւսիւ-ժանները հետ, չէ ներկայանում իբրև միապաղաղ ծի խառնուրդ, նման երկու տարբեր գոյնի աւաղի, որ իրար հետ լիովին խառնւած են: Նա աւելի նման է խայտաբիծ յովաղի մօրթին: Հայ ու մահմեդական ապրում են քով քովի, բայց շատ սակաւաւիթ է, որ նրանք խառնեն ծիմեանց հետ: Այդ պայմանը ծեկ կօգնէ գտնելու հայկական ինդրի լուծման բանալին, հայաստանի համար ծի բարենպաստ կառավարութիւն, և այդ բանալին է — համայնական ու նահանգային ավտօնօմիա՝ ընդարձակ դրութիւններով: Պատրիարք Ներսէսը և Նուբար փաշան, որ իրանց ուշադրութիւնը կենտրոնացրել էին կառավարական աւելի բարձր կարգի հիմնարկութիւնների վրայ, անուշաղիբ են թողել այդ պայմանը:

Կարելի է դիւրութեամբ սահմանագծել ընդարձակ գաւառներ, որոնք համատարր են, ինչպէս Շւէյցարիայի կանտօնները, և որոնց գործերը կարելի է կառավարել նոյնքան քիչ ձեռնամուծութեամբ և փոխադարձ հակաշփման՝ երկու գաւառների իրարու նկատմամբ, որքան Շւէյցարիայում: Բայց ակներև է, այդ գաւառների սահմանները, այնպէս, որպէս նրանք գծւած են ա յ ս ո Ր, պէտք է փոփոխեն: Թիւրք կառավարութիւնը նրանց դիտմամբ սահմանագծել է արևատական կերպով: Նրա միակ հոգան է եղել չը թողնել հայերին մահմեդական տարրերից զատ ու որոշ ծեկ ամբողջութիւն կազմել: Այդ մտքով նա մահմեդականներով բնակւած գաւառների այս կամ այն մասը կարել և ծիացրել է կոտորներով այն գաւառներին, ուր բնակիչների մեծամասնութիւնը — իսկ ծի քանի գաւառներում՝ բայառապէս, — հայեր են: Այդ է պատճառը, որ գաւառները թւում են երկու տարրերի, մահմեդական ու քրիստոնեայ, խառնուրդ:

Պարզ է, որ նահանգների ներկայ սահմանափակումները պէտք է վերափոխեն և ծոնեն իրանց բնական սահմանները: Համաձայն իրանց գլխաւոր բնական գծերի՝ հարաւարեւմտեան, արեւմտեան և հարաւարեւելեան կողմերը, ուր ճիւղն աստ՝անդ գտնուած են հայ գիւղեր, բայց էապէս բաղկացած են ճահճեղականներից, պէտք է կազմակերպեն իբրև զուտ ճահճեղական նահանգներ: Մեծ ու Փոքր Հայքի մնացեալ ճասը բնական կերպով նշանագծուած է իբրև հայկական նահանգներ, ուր ճիւղաւորական համայնքները փոքրաթիւ են:

Հայաստանում արդէն հին ժամանակներից գոյութիւն ունի ճի տեսակ համայնական ավտոնոմիա, ժողովուրդն ինքը լինելով ընտրող իր եկեղեցական պաշտօնեաների, ուսուցիչների, գիւղապետների, կարելի է աներկիւղ կերպով նրան տալ իրաւունք իր վարչական ու ոստիկանական պաշտօնեաների ընտրութեան, որպէս և բոլոր զուտ տեղական գործերի կառավարման: Համայնական ու ճխական ավտոնոմիան կը ճաւայէ աւանճնակի ու ճեկուսացած գիւղերի շահերի պաշտպանութեան, լինի հայ թէ ճահճեղական գիւղ, որ գտնուած է տարբեր ցեղի ու կրօնի պատկանող ազգաբնակութեան ճոցում: Նահանգական ավտոնոմիան կը հանդիսանայ երկրորդ երաշխաւորութիւնը, որով ժողովրդին տրուած է իրաւունք ընտրութեան նահանգային պաշտօնեաների, դատարանական, դպրոցական վարչութեան, և նոյնպէս հասարակական գործերում գործաճեկից լեզւի. և այդ բոլորը հիմնուած հետեւեալի վրայ.—

I Բոլոր քաղաքացիների հաւասարութիւն օրէնքի առաջ, և քաղաքական իրաւունքներ, որ պիտիք են —

II Ազատութիւն մտաւորի ու խօսքի, ազատութիւն խղճի, գուճարումների, ընկերութիւնների և ընտրութեան:

III Անճ ու ընկալարանն անճնումխելի են:

IV Բաճանումն եկեղեցու ու կառավարութեան, իւրաքանչիւր կղեր վճարելով ու կախուած լինելով իր ճխից:—

Դա համաճայն է հայկական հինաւորց սովորութեան:

V Զէնք կրելու իրաւունք նաեւ քրիստոնեաներին, մասնազականներն արդէն վայելելով այդ իրաւունքը:

Այս վերջին ճիջոցն ազգաբնակութեան երկու բաճնի նըկատմամբ համահաւասար է ներսէս պատրիարքի առաջարկին, այն է զինաթափ անել ճահճեղականներին: Մեր առաջարկը, սակայն, ունի այն առաւելութիւնը, որ նա կը ճաւայէ երկրի պաշտպանութեան՝ յարճակումների դէճ:

Կենտրոնական կառավարութեան կազմակերպման խնդիրը ճեղ թուած է, թէ պէտք է որոշէ հետեւեալ կերպով. —

I Մի կառավարչապետ, նշանակուած Եւրօպայի կողմից, որոշ ժամանակամիջոցով:

II Հանրական ժողով, կազմուած որոշ ժամանակամիջոցով որի անդամները ընտրուած են ընդհանուր քէւարկոթեամբ Suffrage universel, անխտիր կերպով հայկական ու մասնազական նահանգներում, առանց կրօնքի խտրութեան: Այդ ժողովը պիտի ունենայ ընտրութեան ու վճոնի ամեն իրաւունք, ճայների մեճամասնութեամբ, երկրի ներքին գորճներին վերաբերեալ բոլոր քաղաքական, տնտեսական ու սօցիալական խնդիրներում: Նա պիտի ունենայ բոլոր օրէնսդրական իրաւունքները:

III Կառավարչապետն ընտրուած է հանրական ժողովի անդամներից մէկին և սա էլ իր կողմից ընտրուած է իր պաշտօնակիցներից մի որոշ թիւ, որոնք միասին կազմում են վարչական Խորհուրդ. սա ամբողջ երկրի վրայ ունի գորճաղիւր կառավարութեան իրաւունք:

IV Օրէնսդրական գորճաւորութիւններում, որպէս և հանրական ժողովում ու Խորհրդներում պիտի գորճաճէ հայոց լեզուն:

Վերջին երկու յօլածը, կցուած առաջինին, տալիս են քրիստոնեայ, այսինքն հայ, տարրին որոշ հէգէճօնութիւն երկրի կենտրոնական վարչութեան ճէջ:

Այո, դա այդպէս է. դա պէտք է այդպէս լինի: Մենք այդ ասում ենք իբրև անաչառ դիտողներ. — ճաթեմաթիկական հաւատարակչութիւն քրիստոնեայի ու ճահեղականի մէջ գործնականապէս անհնարին է: Այդ երկուսից մէկը պէտք է առաջնորդ լինի միւսին, և այդ ղեկըրում պիտի առաջնութիւն տալ քրիստոնեային՝ հէնց այն պարզ պատճառով, որ դարևոր փորձն անժխտելի կերպով ապացուցել է, որ ճահեղականներն անընդունակ են եղել կրօնական համբերողութեամբ օժտւած մի կառավարութիւն հաստատել տարբեր ազգաբնակչութիւններից կազմւած երկիրներում: Նրանք երբէք ընդունակ չեն եղել կառավարել մի նւաճւած երկիր, նրանց քաղաքական դիտութիւնը աւելի առաջ չէ գնացել. — նրանք միշտ շարունակել են պահպանել նւաճողի յարաբերութիւններ նւաճածի նկատմամբ, բնիկ ցեղերը միշտ են թարկւած լինելով ստրկութեան ամեն ստորացման ու թըշնամանքի:

Մենք բնաւ սխալալ չենք դէպի թրքական ժողովրդային ծաստան. բայց, մի կամ այլ կերպ, ճահեղականութիւնը երբէք ընդունակ չէ եղել առաջ բերելու մի վարիչ դասակարգ, որ սնւած չը լինէր ամենանեղ կրօնական անհամբերողութեամբ և ցեղային ամենասատիկ ատելութեամբ:

Ուստի և քրիստոնեայ տարրի յայտնի աստիճան հէգէժօնութիւնը կառավարութեան մէջ — հէգէժօնութիւն լո՛կ այնչափ, որչափ դա անհրաժեշտ է կառավարական սխտեմի գործադրութեան համար — կը յայտնուէ ամբողջ երկրին նպաստաւոր մի միջոց: Արդէն այն հանգամանքը, որ քրիստոնեաներն ու ճահեղականները կունենան միասին մէկ և ընդհանուր երկիր, մի կառավարութիւն ևս, որ դրացի թիւրք նահանգների կառավարութեան բաղդատմամբ աւելի բարձր կերևայ, նրանք կարճ ժամանակում ձեռք կը բերեն տեղա-

կան հայրենասիրութեան զգացումը, որը, չը նայած կրօնքի տարբերութեան, նրանց աստիճանաբար կը դարձնէ սերտ միացած մի համայնութիւն:

Այս ընդհանուր խորհրդածութիւններին կից կայ մի մեծ ու նշանակելի իրողութիւն, որ սովորաբար թողւած է աննկատ և որը, սակայն, անխուսափելի է դարձնում հայերի որոշ չափի առաջնութեան իրաւունքը: Առհասարակ Հայաստանի ո՛չ-հայ բնակիչներին ընդունւած է անւանել մէկ ընդհանուր անունով — ճահեղական, այն ենթադրութեամբ, թէ դրանք ամբողջովին կազմում են մի համատարր ճարմին: Իրապէս, ճահեղականները բաղկացած են տարբեր ժողովրդներից ու ցեղերից, իւրաքանչիւրն ունենալով իր առանձին լեզուն, և հակառակ թիւրքերի օրթօրօքս ճահեղականութեան: Կան իւրուքներ, թիւրքմէններ, նօգայ թաթարներ, չերքէզներ, լաղեր, Տրապիզօնի վիլայէթում, կըզլբաշներ, Դէրսիմի և Միւշիլի լեռներում, զէյթէքներ, քիւրդեր և այն: Վերջիններս, ամենից մեծաքանակն այդ ցեղերից, իրանց մէջ էլ բաժանւած են բազմաթիւ աշիրէթների վրայ, որոնք, լինելով միմեանցից զատ, ունեն, շատ անգամ, տարբեր բարբառներ և պատկանում են ճահեղական տարբեր ազանդների: Դրանց կից վերջապէս կան նաև բուն թիւրքերը: Տարբեր ժողովրդների ու ցեղերի այդ խառնիճաղանճը չէ ներկայացնում ոչ մէկ աշխարհագրական կապ, որպէս և չունի ո՛չ մէկ ազգային առնչութիւն: Նրանք չեն կազմում բարոյապէս ու նիւթապէս մի հասարակութիւն. իւրաքանչիւրը, զատ միւսներից, ապրում է իր առանձին կեանքով, համեմատական անկախութեան մէջ, իրարու հետ ունենալով ընդհանուր միայն մի բան — ատելութեան զգացում դէպի իրանց նւաճողները՝ թիւրքերը: Այսպէս, ճահեղական ընդհանուր անւան տակ, գոյութիւն ունի իրապէս զանազան ժողովրդների մի շարք,

որ հակադրուած է հայերին իբրև կշիռքի երկրորդ բաժինը,
ինչ հակառակ է թէ՛ արդարութեան և թէ՛ ճշմարտութեան:

Ինչ վերաբերուած է հայերին, օտարազգիներն իրանք ըն-
դունուած են, որ նրանք կրուած են իրանց մէջ այն ամեն տար-
րերը, որոնք կարող են կազմել մի հոծ ու կորովի ազգ. —
հայերն ամենքն ունեն ծիւնոյն լեզուն, ծիւնոյն կրօնը,
ծիւնոյն գրականութիւնը, ծիւնոյն կուլտուրան, ծիւնոյն
բարբերը, և ծիւնոյն պատմական աւանդութիւնները, և ներ-
կայի ծիւնոյն դառն տանջանքները: Ապա ուրեմն բնական
ու օրաճաքանական է, որ նրանք իրանց ձեռքն առնեն
երկրի քաղաքական կեանքի կառավարուածը: Մեր ցանկացածն
այն է, որ երկրուած քանաճ բնական տարրերի և ոյժերի քր-
ծառնութեան առաջ այլ և այլ արւեստական արգելքներ չը
ստեղծեն:

Ներկայ նախագիծը, որ կարող է եզրակացել հետևեալ
բառերով՝ "Ինքնավար Հայաստան", չէ կարող համարել
պահանջոտ, քանի որ նա գործնական է ու չափաւոր: Նրա
գործադրութիւնն անյետաձգելի է՝ առաջն առնելու համար
գալիք ծանր դժարութիւնների, շարունակական խռովութիւն-
ների և սպառնական փոթորիկների:

ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

30 Յունվար, 1913.

ՊԱՐԻՉ



Ս.-Գ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԸ ԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

	Ֆ. ս.
1. ԾՐԱԳԻՐ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Գ. տպ.	—
2. ՆՈՐ ՀՈՍԱՆՔ և ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ: (սպառւած)	1
3. ՏԱՐԵԴԱՐՁ 1890 թ. ՅՈՒԼԻՍ 15-ի Յեղափոխական Հերոսներ, Յ. Զանկիւլեանի, Կ. Մ. Նալպանտեանի և Յ. Ղուծրուեանի պատկերներով: (սպառւած)	30
4. ՈՎ ԻՆՁՈ՞Վ Է ԱՊՐՈՒՄ, Ս. Դիկչտէյնի թրգ.	25
5. ՄԱՅԻՍԻ ՄԷԿԸ. Աճենամեայ Համաշխարհային Տօն Բանուորների, Գ. Պլեխանովի և ծի գլուխ Պ. Եքսերօզի "Բանուորական Շարժում" գրւածքից թարգմանութիւն (սպառւած)	25
6. ՀԱՅԵՐՆ ԱՄԵՐԻԿԱՑՈՒՄ, Ալինեանցի և Ի՞ՆՁ Է ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁ, թարգ. Կարլ Մարքսից	15
7. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ, Ֆերդինանդ Լասալի, Հեղինակի պատկերով.	40
8. ԻՐԱՆՈՒՆՔ ԾՈՒԼԱՆԱԼՈՒ, Պօլ Լաֆարգի,	25
9. GARDEN OF EBEN DEFILED! (սպառւած)	5
10. ԲՈՆՈՒԹԵԱՆ ԳԷՄ, Գաղափարայի դատավարութ. 1	
11. ՇԻՐԻՆ ԱՒԻ և ԻՐ ՍՊԱՆՆՈՂԸ, (սպառւած)	10
12. ԳԱՐԻԲԱՂԻ, թարգմանութիւն Հ. Խ. ի	1 50
13. ԳՈՐԾԱԻՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ, Կ. Կառլցկիի, թարգմանեց Ս. Սապազ-Գիւլեան	30
14. ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԸ Կ. Կառլցկիի թարգմանեց Ս. Սապազ-Գիւլեան	30
15. ՍՕՅՆԱԼԻՉՄ և ՀԱՅՐԵՆԻՔ, պրակ I թարգմանեց Ս. Սապազ-Գիւլեան	40
16. ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԻՆ, գրեց Ս. Սապազ-Գիւլեան	50
17. ԳՐԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Հնչ. Կուսակցութեան	—
18. ԾՐԱԳԻՐ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Գ. տպագրութիւն (Տաճկաստանի Համար)	—
19. ՀԱՐՑԱՐԱՆ	—
20. ԸՆԴ. ԿԱԶՄ. ԿԱՆՈՆԱԳԻՐ Ս.-Գ. Հնչ Կուսակ.	—
21. APPEL aux GRANDES PUISSANCES et aux PEUPLES EUROPEENS	—

8089 - 8100

ՀՀ Ազգային գրադարան



NL1711116

ՀՀ Ազգային գրադարան



NL1711115

ՀՀ Ազգային գրադարան



NL1711114

ՀՀ Ազգային գրադարան



NL1711113

ՀՀ Ազգային գրադարան



NL1711112

ՀՀ Ազգային գրադարան



NL1711111

ՀՀ Ազգային գրադարան



NL1711122

ՀՀ Ազգային գրադարան



NL1711121

ՀՀ Ազգային գրադարան



NL1711120

ՀՀ Ազգային գրադարան



NL1711119

ՀՀ Ազգային գրադարան



NL1711118

ՀՀ Ազգային գրադարան



NL1711117

Handwritten signature

